



հայաստան համահայկական հիմնադրամ
The Armenia Fund



ԳՅՈՒՂԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
Rural Development Program

ԱՄՍԱԹԻՎ.
ՈՒՄ ԿՈՂՄԻՑ.

Մարտի 7, 2008 թ.
Գյուղական զարգացման ծրագրի
գրասենյակ

ԽՈՐԱԳԻՐ.

«Հայաստան» համահայկական հիմնադրամի
Գյուղական զարգացման ծրագրի շաբաթական
զեկույց

Դժվար է պատկերացնել, որ միայն մեկ շաբաթ է անցել մեր վերջին զեկույցից: Այս կարճ ժամանակահատվածում Հայաստանը ականատես եղավ մի շարք իրադարձությունների, որոնք ցնցեցին մեզ բոլորիս: Դեռևս զգացվում է այս իրադարձությունների հետեւանքները: Չենք մանրամասնի կատարվածը, դուք բնականաբար տեղյալ եք իրադարձությունների ընթացքին: Կասենք միայն, որ այն ինչ տեղի ունեցավ ապացույցն էր նրա, թե ինչքան հեշտ է ժողովրդավարությունը վերածել քաոսի եւ ինչքան փխրուն է անվտանգության մեր պատրանքը:

Այս ամենով հանդերձ մենք պետք է շարունակենք մեր աշխատանքը եւ այսօր ձեզ ենք ներկայացնում Լոռի կատարած այցելության ֆոտոզեկույցը, որը ներկայացնում է շրջանում իրականացված երկու ծրագրերը:

Այլ նորությունները հակիրճ`

- «Հայաստան» համահայկական հիմնադրամի Գյուղական զարգացման ծրագրի անձնակազմը հանդիպեց Հայաստանի ֆերմերների ասոցյացիայի ներկայացուցչի հետ, որի միջոցով կընտրվեն ավտոմատ կթի ագրեգատի առաջին շահառուներին:
- Մենք նաեւ աշխատում ենք սահմանամերձ համայնքներում միկրոֆինանսավորման համար հնարավոր լուծումներ գտնելու ուղղությամբ:
- USAID-ի կողմից հովանավորվող CAPS ծրագրի ինֆորմացիոն տեխնոլոգիաների մասնագետ Արմեն Աբրահամյանի հետ հանդիպման ընթացքում քննարկեց սահմանամերձ համայնքներում ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման հնարավորությունները: Մենք որոշեցինք ինֆորմացիոն տեխնոլոգիաների բնագավառում աշխատող բոլոր ընկերություններին հավաքել մի սեղանի շուրջ, ներկայացնել խնդիրը եւ միասին փնտրել հնարավոր լուծումները, փորձելով գտնել թե յուրաքանչյուր ընկերություն ինչ չափի ներդրում է կարող ունենալ այս բնագավառում:



Դեպի Ձյունաշող

Մարտի 4-ին մենք այցելեցինք Լոռու մարզի սահմանամերձ համայնքներ: Այցի նպատակն էր Ձյունաշող համայնքին հանձնել փոքր ծրագրերի շրջանակներում գնված համակարգիչը եւ տպիչը, ինչպես նաեւ տեղում տեսնել այն կահույքը, որը տեղադրվել է համայնքային դպրոցներում «Հայ Դպրոց» հիմնադրամի հետ համատեղ իրականացված ծրագրի շնորհիվ: Ուղեւորության ընթացքին կարող եք ծանոթանալ դիտելով լուսանկարները:

Չնայած որ Երեւանում արդեն գարնանային եղանակ էր, մեր ճանապարհին այն բոլորովին այդպիսին չէր...



Մոտենալով նպատակակետին եղանակը զգալիորեն բարելավեց, իսկ ճանապարհները կտրուկ վատացան: Ինչպես ասում են ամեն ինչ միանգամից չի լինում...



Ձյունաշող գնալու ճանապարհին մենք այցելեցինք նաեւ Արծնի եւ Ձորամուտ համայնքներ: Բոլոր այս համայնքները, ինչպես նաեւ Գոգավան համայնքը ստացել են դպրոցական նոր կահույք: Այս ծրագիրը իրականություն է դարձել Հայ-Ամերիկյան գործարարների միության շնորհիվ եւ իրականացվել է «Հայ Դպրոց» հիմնադրամի հետ համատեղ: «Հայաստան» համահայկական հիմնադրամի ֆինանսական օգնությամբ, Ձորամուտ դպրոցի տնօրեն տիկին Սուսաննա Պողոյանը այս կահույքը գյուղ է տեղափոխել: Այժմ տիկին Պողոյանը փորձում է միավորելով համայնքային ռեսուրսները դպրոցի վերանորոգման համար:



Արդեն ընթացքում են ներքին հարդարման աշխատանքները եւ շուտով տեղադրվելու է նոր կահույքը:



Մեր հաջորդ կանգառը Ձյունաշողն էր, որտեղ կահույքը արդեն տեղադրված էր:

Այժմ կարելի էր անցնել մեր հիմնական առաքելությանը, որը համակարգչի եւ տպիչի հանձնումն էր: Տեղում մեր աշխատակիցները դպրոցի տնօրենի եւ բարձր դասարանցի աշակերտներից մեկի հետ անցկացրեցին համակարգչի օգտագործման կարճ դասընթաց:





Մի ժամ հետո մենք հետ դարձի ճանապարհին էինք: Տասնհինգ րոպե անց ավտոմեքենայի անիվը ծակվեց եւ ստիպված էինք այն փոխել...



Ամեն ինչ լավ է եթե բարեհաջող ավարտ է ունենում: Շուտով նորից ճանապարհ ընկանք եւ երեկոյան արդեն քաղաքում էինք: Այսպիսի ուղեւորություններից հետո այն ինչ մնում է հիշողության մեջ դա հանդիպած մարդկանց դեմքերն են եւ ցանկությունը հնարավորինս ամեն ինչ անել իրենց կյանքը բարելավելու համար: Այս մարդիկ չեն ցանկանում, որպեսզի ինչ որ մեկը կատարի իրենց աշխատանքը, նրանք ուղղակի այս դժվարին պայմանները հաղթահարելու համար օգնության կարիք ունեն: Խոսելով դժվար պայմանների մասին կարող եք տեսնել մեր ավտոմեքենան ուղեւորությունից առաջ...



...եւ հետո: